

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Խիթիստով գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրելի գրվում են ուղղակի
Тифлисе. Редакция „Ммас“

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Դպրի կիրակի և Ծն օրերէն)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր թաւին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ժամանակակից գրութիւնը — Ներքին տե-
սութիւնը: Նոր օրգան: Նամակ կրեանից: Նա-
մակ կրեանից: Նամակ թուղթովից: Նամակ զու-
րայից: Արտաքին տեսութիւն: Պարսկա-
տան: Աֆղանստան: Մշակիչ հեռագիրներ: —
Հայտարարութիւններ:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ԴՐՈՒԹԻՒՆ

«ГОЛОСЪ» լրագրի մէջ տպւած
է հետեւեալ առաջնորդող յօդու-
ածը:

Ծայրագոյն Կարգադրող Մաս-
նաժողովը փակված է: Կայսրի
սեփական կանցելարիայի III-դ բա-
ժինը ոչնչացրած է: Ներքին գոր-
ծերի մինիստր նշանակված է Կոմս
Լօրիս-Մելիքով և նրա գործու-
նէութեան շրջանը ընդարձակ-
ված է:

Այս երեք փաստերով զբաղված
է այժմ ռուսաց ամբողջ հասա-
րակութիւնը, որ դեռ ևս երկար
ժամանակ կը հետաքրքրվի այդ
փաստերով իբրեւ մեր ներքին քա-
ղաքականութեան նոր դարադիւ-
րանքի նշաններով: Այդ դարադիւ-
րանքին այն ժամանակ սկսվեցաւ, երբ
Կոմս Լօրիս-Մելիքով Ծայրագոյն
Մասնաժողովի նախագահ նշա-
նակվեցաւ: Անցած մի քանի ա-
միսները, որոնց ընթացքում մեր
կառավարչական անձանց շրջանի
մէջ նշանաւոր փոփոխութիւններ
եղան, և որոնք բաւական աննշան
ժամանակամիջոց են կազմում, որ
մենք կարողանանք դատողութիւն
տալ կառավարչական նոր ուղղու-
թեան մասին: Օգոստոսի 6-ի
Խառնադրոյն հրամանի հիման վը-
րա մենք հաստատ կարող ենք
ասել, որ Մասնաժողովը հասա-
ւոր նպատակին, որովհետեւ իր
հիմնվելուց վեց ամիս անցած, նա
փակվեցաւ: Դա մեծ ծառայու-
թիւն է: Առհասարակ Ռուսաս-
տանի մէջ ժամանակաւոր մաս-
նաժողովները գործում են միշտ,
մինչդեռ նրանք պէտք է աշխա-
տեն, որ ամենակարճ ժամանակա-
միջոցի մէջ հասնեն իրանց նպա-
տակին և այլ ևս հարկաւոր չը
լինեն:

Մենք չենք կարող ցոյց տալ
Մասնաժողովի գործունէութեան

հետեւանքները, որովհետեւ այդ
գործունէութիւնը մեզ յայտնի չէ,
բայց կարող ենք հաստատ ասել,
որ մամուլի մեզ ծանօթ շրջա-
նի և հասարակութեան գիտակ-
ցութեան մէջ մի բան է կա-
տարվել: Այդ բանը շատ հեշտ է
մեկնել կառավարչական քաղաքա-
կանութիւնը միջոց տուեց մամու-
լին արտայայտել հասարակութեան
խկական ցանկութիւնները և դը-
րանով բաժանեց նրանց զաւտնի
մամուլի խելագար երազներէից:
Կառավարութիւնը մի փորձ ա-
րեց, նա միջոց տուեց մամուլին
ազատ խօսել, որ տեսնի, թէ նա
ինչ կասի:

Այս ճշմարիտ՝ մամուլը յայտնեց
իր կարծիքները և դրանով ոչն-
չացրեց այն համոզմունքը, իբր թէ
զաւտնի մամուլը թոյլատրած մա-
մուլի շարունակութիւնն է, իբր
թէ առաջինը յայտնում է այն,
ինչ մասին թոյլատրած մամուլը
չէ կարող խօսել:

Այն բազմութիւն յօդուածներից,
որոնք տպվեցան վերջին ժամա-
նակներում, ակնհայտ երևաց, որ
ինտելիգենցիայի և ռուս յեղափո-
խականների մէջ ոչինչ համերաշ-
խութիւն չը կայ:

Ռուս մամուլը վերջին ժամա-
նակներում ցանկութիւն էր յայտ-
նում, որ անձնական ազատու-
թիւնը իր բոլոր տեսակներով որ-
քան կարելի է մեծ լինի: Այդ
ազատութիւնը պէտք է սկսվի
անձնական ապահովութեամբ և
վերջանայ կրօնական ազատու-
թեամբ:

Յեղափոխականները կամենում
էին ոյժով ոչնչացնել այն բոլոր
հիմունքները, որոնցով պահպան-
վում է, զարգանում է և ամրա-
նում է մարդկային անձնականու-
թիւնը և գլխաւորապէս մասնա-
ւոր սեփականութիւնը:

Ռուս հասարակութեան զար-
գացած մասը ցանկանում է, որ
զարդանայ ռուսաց պետութիւնը,
վերանորոգելով իր հասարակա-
կան ոյժերը, իսկ յեղափոխականները
կամենում էին քանգել պետու-
թիւնը և ոչնչացնել այն հասարա-

կութիւնը, որ համարում է պե-
տութեան հետ:

Այդ համեմատութիւնը կարե-
ւոր էր երկար շարունակել, բայց
մենք համոզված ենք, որ անկա-
րելի է խօսել մեր սօցիալիստների
զաղափարների և իդէալների մա-
սին, որովհետեւ նրանք չը կան:
Մենք կարողացել ենք սօցիալիստ-
ների հրատարակութիւնները, բայց
նրանց մէջ մի որոշ միտք, կամ
յայտնի նախադիմ չենք կարողացել
գտնել: Մենք կամենում էինք ի-
մանալ, թէ այդ մարդիկը ինչով
են աղղում երիտասարդութեան
երեւակայութեան վրա: Մեր հե-
տախուզութիւնները ի գուր եղան,
նրանց բարոյների մէջ չը գտանք
զաղափարներ և պրօգրամ: Մենք
համոզվեցանք, որ սօցիալիստները
անկարող են ազդել երիտասար-
դութեան վրա իրանց մտքերով և
պրօգրամներով: Նրանց գլխաւոր
ոյժը նրանում էր կայանում, որ
կարողանում էին մատնացոյց լինել
մեր հասարակական կեանքի տը-
խուր փաստերի վրա, որոնց մասին
նրանց մամուլը այնպիսի ազատու-
թեամբ էր խօսում, որ անմատ-
չել էր օրինաւոր, թոյլատրված
մամուլին այն անքնական պայման-
ների պատճառով, որոնցով վերջի-
նը շրջապատված էր:

Այդ փաստերը չափազանց վը-
նասակար ազդեցութիւն էին գոր-
ծում: Այժմ օրինաւոր մա-
մուլը կարողանաւ առաջ բերել
այդ փաստերը և քննել նրանց
ինչպէս հարկն է, նրանք յեղա-
փոխական ազդեցութիւն չէին
գործի: Ամենից առաջ օրինաւոր
մամուլը այդ փաստերը առաջ կը
բերէր միւսների հետ և դրանք
յանցաւոր նպատակի հաւաքածու
չէին կազմի: Արդարո՞ղ ընդհա-
նուր և ազատ քննութեան ժա-
մանակ կերեւար նրանց իսկական
նշանակութիւնը, մինչդեռ զաղա-
փար մամուլը նրանց չափազանցե-
ցնում էր և իր ցանկացած նշա-
նակութիւնն էր տալիս: Արդարո՞ղ
ամենին յայտնի է, որ իւրաքան-
չիւր լրագրի մէջ տպվում են սը-
խալ և անհիմն լուրեր, ամենից

շատ նրանք տպվում են արդե-
ված լրագրիների մէջ, միայն այն
զանազանութեամբ, որ օրինա-
ւոր լրագրի յայտնած սխալ լու-
րը միշտ կարելի է հերքել, իսկ
արդեւված լրագրի սխալ լուրը
միշտ անհերքելի է մնում: Այս
բաւական չէ: Արդեւված լրագրի-
ները իրանց ընթերցողների հա-
մար ոչ թէ միայն սովորական
լրագիրներ են, այլ այն «ան-
յայտ կառավարութեան» պաշ-
տօնական հրատարակութիւններ,
որ առաջնորդում է զաւտնի ըն-
կերութեանը: Այդ լրագիրների
հաղորդած տեղեկութիւններին
զաւտնի ընկերութեան անդամ
ները նոյնքան են հաւատում, որ-
քան մենք «Правит. Вѣстн.» լը-
րագրի հաղորդութիւններին: Զոր-
րօղ՝ ճշմարիտ պատահած անց-
քերից շատերը տպվում էին և
քննվում միայն արդեւված լրա-
գիրների կողմից, ուրեմն նրանք
քննվում էին միակողմանի կեր-
պով ընկերութեան անդամների
ֆանտազիկոսութիւնը գրգռելու նը-
պատակով:

Ռուս հասարակութեան մեծ
ցարը նրանում էր կայանում, որ
ռուս մամուլը անկարող էր քննել
և լուսաւորել այդ փաստերը, ո-
րոնք յեղափոխականների ձեռքին
մեծ զենք էին իրանց հետեւողների
ֆանտազիկոսութիւնը մեծացնելու
համար: Հասարակութիւնը և մա-
մուլը զարհուրում էին չարագոր-
ծութիւններից, որոնց պատճառնե-
րը յայտնի չէին, և նրանք անկարող
էին օգնել տարաբաղադրութեանը:

Մինչդեռ հարկաւոր էր, որ
մամուլը և հասարակութիւնը մաս-
նակցէին այն պատերազմին, որ
ունէր կառավարութիւնը իր զաղա-
փարի թշնամիների հետ: Կառավա-
րութեան գործը մեր գործն է,
որովհետեւ նա ռուսաց պետու-
թեան հիմնաւոր տարրն է, իսկ
այդ պետութիւնը մեզ ամենքիս
համար թանկագին է, որով-
հետեւ պետութիւնը մենք ենք:
Ծայրագոյն Մասնաժողովի մեծ
ծառայութիւններից մէկն էլ այն
է, որ միջոց տուեց հասարա-

կուլտուրաները իր ձգտումներով և յոյսերով դուրս գալ այն խառնուրդ, որի մէջ նա գտնվում էր առաջ:

Այժմ միջոց կայ ցոյց տալ հասարակութեան ցանկութիւնները և նրա ատերուութիւնը դէպի յիշատակահանները: Թէպէտ այս կարճ ժամանակամիջոցի մէջ հասարակութեան ձգտումները միայն ընդհանուր գծերով նկարագրանայնու ամենայնիւ դա էլ բաւական է սահման դնելու նրա մէջ ինչ որ օրինաւոր և օգտակար է և ինչ որ սարսափ է ազդում ուստաց երկրի վրա:

Ահա այս հետեւանքներին հասնելուց յետոյ փակվեցաւ ծայրագոյն մասնաժողովը: Այս ծառայութիւնը երբեք չէ կարող մոռանալ ամբողջ Ռուսաստանը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՕՐԳԱՆ

Կամիւ մի քանի խօսք ասել «Մշակի» այն առաջնորդող յօդուածի մասին, որ առաջարկում է մի հայոց օրգան հիմնել Մօսկվա կամ Պետերբուրգ քրանսերէն և ուսերէն լեզուով: («Մշակ», № 119):

Տառ խելացի և կարեւոր առաջարկութիւն է դա. մենք պէտք է աշխատենք որքան կարելի է շատ զրել ու հրատարակութիւններ անել ծածկաստանի հայերի խնդրի մասին և արագական լեզուներով: Թիւրքիան ինչպէս տեսնում ենք, ամենայն միջոցով աշխատում է ճնշել թէ՛ հայոց մամուլը և թէ՛ հայերի հասարակական ձայնը ու կարծիքը: Թիւրքիայի քաղաքացւոյն անձինք վերջապէս հասկացել են, որ հայոց խնդիրը շատ փափուկ է դարձել. այս պատճառով ամենայն միջոց գործ են դնում Հայաստանի և նրա որդւոց թշուառ վիճակը ապահով և բարոյց ցոյց տալ և արագալի առաջ. նրանք ջանք են անում հաւատարմութիւններ տեղադրել թիւրքիայի, որ հայ կոչված ազգը ամենանաւագ մասն է կազմում թիւրքաց պետութեան մէջ—այն է 17% (17). թէ՛ Հայաստան բառը լոկ մի պատմական անուն է և ուրիշ ոչինչ. թէ՛ հայ ազգաբնակչութիւնը երբեք ստորափելի սովի ազդեցութեան չէ՛ ենթարկվել. թէ՛ քաղաքակրթութիւնը քրդերի և չրքերի ձեռքով հայերին հասցրած կոտորածները խաբէրայ և բարձրագոյ մարդկանց խօսքեր են և այլն և այլն: Մի խօսքով Թիւրքիան սխտեմատիքապէս նեղել ձնչել ու խեղդել է ուղում հային. նա բռնում է նրա ձեռքը, որ նա չը գրէ, նա կապում է նրա բերանը, որ նա չը խօսի. նա ամենայն տեսակ չարամիտ զրպարտութիւններ է անում հայի վրա:

Ինչ ենք անում մենք՝ ամենայն օր տեսնելով լսելով ու կարդալով Թիւրքիայի այս անամթ շողորմութիւնները և չարամիտ բռնաբարութիւնները. մենք լուռ ենք: Ինչ, զուցէ սպասում ենք, որ զանալը ոսկորին հասնի: Զէ՞ որ այդ անտոյգ ու խաբէրայ տեղեկութիւնները կայծակի արագութեամբ տարածվում են և արագալի բոլոր տեղութիւններին մէջ և փոքր առ փոքր ստանցնում են այն մի փշուր համակրութիւնը, որ նրանք ունեն դէպի հայր: Զէ՞ որ լռելով ու անտարբեր

մնալով մենք մահադիմ հարուած կը պատճառենք հայկական խնդրին և այնուհետեւ միայն բարեաւ ամենայն մի փայլուն ապագայ, գեղեցիկ յոյսեր, ազնիւ նպատակներ..... Այն լռելով կարելի չէ՛ գործ տեսնել. և եթէ Թիւրքիայի հայը չունի զէնք, եթէ իր ձեռքով կարող չէ պաշտպանել իր անձը, իր ձեռքով պատժել իր թշնամուն—գոնէ գրե՛նք, բողոքենք Թիւրքիայի խաբէրայ քաղաքականութեան դէմ. մենք ու պարզեք մեր դատը և արագալի նրան հասկանալի լեզուով:

Ահա թէ ինչու «Մշակի» վերաբերալ առաջարկութիւնը մի նոր օրգանի մասին արժանի է խորին ուշադրութեան և լիովին համակրութեան ամենայն մի ազնիւ հայի կողմից: Հարկաւոր է ամենայն միջոց գործ դնել նրան իրագործելու որքան կարելի է շուտով. յետագայը անկարելի է: Հարկաւոր է համոզել և արագալի, որ Թիւրքիան յատուկ իր օգտի համար ձեռք է փոխում և աղաւաղում է ամենայն մի ստոյգ դէպք և պատահմունք հայերի վերաբերութեամբ, որ նա թէ՛ Ֆորմիսի պատրուակաւ միայն ատերութիւն և թշնամութիւն պէտք է գրգռէ հայի դէմ Հայաստանում բնակվող զանազան մուսուլման ազգութեանց մէջ և դրանով մի օրհասական կոտորած պատրաստէ հայի զըլխին: Պէտք է պարզել և արագալի, որ Թիւրքիան բոլորովին անընդունակ է երբ և ինչ կարգի բերել իր քայքայված տեղութիւնը և խաղաղութիւն ու բարօրութիւն ընծայել իր հպատակ ազգութիւններին—քանի որ դուրան է արդարադատութեան, հաւատարմութեան և մարդասիրութեան կշիռը:

Այս և սոցա նման կարեւոր խնդիրներին բացատրութիւնները, հայոց անցեալ և ներկայ կեանքի ճշմարիտ նկարագիրը, հայաստանում տեղի ունեցած և ունենալով դէպքերը և հանգամանքները, Հայաստանի ազգաբնակչութիւնների ստոյգ վիճակագրութիւնը—ահա թէ ինչ պէտք է լինի բովանդակութիւնը նոր հայոց օրգանի, որին թոյլ կը տանք մեզ առաջին անգամ «L'Arménie» վերնագիրը առաջարկելու *):

Բայց ի՞նչու է որոնել այս մտքի իրագործումը հեռու հիւսիսում—Մօսկվա կամ Պետերբուրգ. հիւսիսում չը կայ հայութեան կենտրոն. բայց անպատճառ հարկաւոր է, որ այսպիսի ծանրակշիռ օրգանը լոյս տեսնէր մի բազմահայ կենտրոնում, այնպիսի մի քաղաքում ուր լինէին հայոց մտաւորական, հասարակական և առեւտրական շրջաններ: Մեր կարծիքով Թիւրքիայի ամենից աւելի կը վայելէ զուլս կանգնել այսպիսի մի փեմ ձեռնարկութեան: Մօսկվա, որպէս և Պետերբուրգ և այլ շատ քաղաքներ անկասկած չեն մերժելու իրանց նիւթական օժանդակութիւնը այս օգտաւէտ հրատարակութեան համար և պէտք է յուսալ, որ ամենայն միջոցով հոգ կը տանեն նոր օրգանի առաջադրման ժամանակ:

Իսկ դուք, մեծապատիւ խմբագիր, հաւատարմ եղէք, որ մեծ և անասման բարիք ցոյց տուած կը լինէք հայերին, եթէ յանձն առնուք պատական «Մշակի» հետ միասին և L'Arménie հանդիսի խմբագրութիւնը:

Մօսկվա. Գր. խալաթեանց

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

16 օգոստոսի

Դատաւարանները ամբարնոց փոխադրվելուց յետոյ, այս տարի ևս անցեալ տարիներին նման գործիւնը շարունակվում է Երևանի մէջ, այն զանազանութեամբ միայն, որ այժմ նա աւելի շուտ շուտ է կրկնվում, քան թէ մի և որ և ինչ այլ ժամանակ. քաղաքացիները չափերը իրանց անձն ապահովելու և աների մէջ եղած ստացումները ա-

*) Խմբագրութեան լուր կը լինէր չարաթաթիւթիւր հրատարակել միայն քրանսերէն լեզուով:

զատ պահելու համար գիշերը շատ անգամ անքուն են մնում. քաղաքամասերից մասնաւոր իշտի ընտելիները դատաւարութեան գիշերապահի պաշտօնը կատարելու Դուք պէտք է տեսնէք, թէ ինչպէս գիշերվայ ժամին 12-ին կամ մէկին զուրկ չուցին պատասխանում է մի այլ երկարածիկ շուրջ, որ նշանակում է. հեղու տեղը հանգիստ կայ և սպասիր, ես կը գամ օգնութիւն և մենք կը հասնենք նպատակներին: Հետեւեալը լինում է այն, որ միւս օրը քաղաքում խօսելին են լինում, թէ այս ինչ կամ այն ինչ մարդու բոլոր ստացումները, մինչև անգամ հագի հագուստը գողերը տարել են և մերկացած ամուսինները, ձեռքները ծալած արդարադատութիւն են խնդրում:

Աստճներս լուր խօսքեր չեն. հարկաւոր ապացոյցներ կան: Բացի ստանից օր ցերեկով փողոցներում ու հրապարակներում գող-աւազակներն աւանայն ստատանայութեամբ դուրս են քաշում այս ու այն գիւղացու զրպանից նրա վերջին կողմերը և նա, ան ու վախ քաշելով, հազար անգամ անխնայ է քաղաքը ու նրա միջի չար ու անսիրտ ժողովուրդը: Հարկաւոր օրինակները մի պարզ ապացոյց բերում: Արարանցի մէկը, Ղարաւուլի գիւղից, Անդրէաս Սահակեան անունով, իր մի հատ եղնով դպիս է քաղաք, որ ձեռքին ունեցած ութ մանկէ փողով ցորեն աւելի իր ընտանիքի համար, մինչև որ գիւղի ցորենները կը հասնեն, խեղճ գիւղացին քաղաք դառնալէս գրպանից գողանալ է տալիս ութ մանկէ իր մինչև գործի եղելութիւնը ոստիկանութեանը հասկացնելը և գողին բռնելը, եղը յափշտակում են: Բայց բարեբախտաբար վերջին դժբախտութիւնն անցնում է և այժմ խեղճ գիւղացին քաղաքում, առանց մի կտոր հացի, այս ու այն պաշտօնատեղում իր ցաւն է լալիս:

Հաւատացէք, որ մեր Երևանում այսպիսի օրինակները շատ են և, համարեա, սովորութիւն են դարձած: Շատ ժամանակ պէտք է անտարբերութեամբ նայել այսպիսի չարագործութիւններին վրա և լռել: Ես, ճշմարիտ ասած, կուզէի խօսել, կուզէի այս ու այն հիմնարկութեան, պաշտօնատեղի գործունէութիւնը նկարագրել, նրանց պակասութիւնները ցոյց տալ, բայց, իբրև մահկանացու մարդ, մէկիցը անկախութիւն ունեւմ, միւսիցը երկիւղ, երրորդին ինձ բարեկամ եմ համարում և այն. այս պատճառով ես ևս ուրիշներին նման լուռ եմ, սկսած խօսքս չը վերջացրած և մի հարց եմ դնում այստեղ թէ՛ ինչու համար հաշտարար դատաւորի օգնականը, Երևանի ժողովուրդը խառն յարաբերութիւններ մէջ թողած, գնացել, նստել է Գեղարդայ վանքում և այնտեղ է բարեհաճում խնդրատուններին ու զանգատաւորներին ընդունելու:

Յովհաննէս—Հեթում

ՆԱՄԱԿ ԿԻՆԷՎԻՑ

Օգոստոսի 15-ին

Հեռանալով Թիֆլիսից ես ձեզ խոստացայ ժամանակ առ ժամանակ նամակներ ուղղել «Մշակի» մէջ տպելու համար: Եւ ահա ուղարկում եմ առաջին նամակս Կինէվից:

Տէր Աստուած. միթէ կայ երկրագնդի երեսի վրա տեղ, ուր հայի ոտքը կոխած չը լինէր. որ քաղաք ուղում էք գնացէք, ամեն տեղ հային կը հանդիպէք: Այս ինչ դժբաղդութիւն է... Մինչև երբ կը շարունակեն հայը որոնել իր բաղդը օտար երկրներում և այդպէս ցրվելով հետզհետէ անհետանալ...

«Այստեղ լու է, որտեղ մենք չենք», մտածում է հայը, երբ մասնաւոր սկսում է նա վաճառականութեամբ պարագել: Եւ ահա հայը, որը ընտրում է վաճառականութիւնը, վեր է քաշում գըլուրի և գնում է. ուր է գնում, ինչու է թողնում նա իր տունը, ծննդեան տեղը, հայրենիքը: Ինքը գուցէ չէ իմանում. չէ՞հա հեռու իմ հայրենիքից է նրա միակ միտքը, «այնտեղ միայն կը կարողանամ հայկթայիլ իմ օրական ապրուստը»: Եւ, էլ ինչ հարկաւոր է ասել, որ այսպիսի հայը անընդունակ է դառնում Չագիլի «И дымъ отечества намъ сладокъ и пріятенъ» խօսքերը հասկանալու:

Այսպիսի հայը միայն մի նպատակ ունի, միայն մի բան է մտածում, դա՛ «փողն» է: Բայց չէ որ նա չարաչար սխալվում է, կարծելով, որ «փողը» կարելի է վաստակել միայն օտար երկրներում... Այս անգամ խօսքս Կինէվի մեր հայ վաճառականութիւնը վրա է: Այստեղ կան մինչև 45—50 հոգի հացեր, որոնք պարագում են վաճառականութեամբ, կան նոյնպէս և 5—6 մարդ հայուստանդներ: Հայ ուսանողները մասին ոչինչ ասելու չունեն, որովհետեւ նրանց կեանքը չէ ստացել մի

առանձին ուշադրութեան արժանի կերպարանք: Ամեն մէկը վարում է մի տեսակ առանձնացած կեանք, ամեն մէկը կարծես միայն իր սեպհական շահերով լինի զբաղված...

Դառնանք դէպի այստեղի հայ վաճառականները: Մտնում էք մի փողիկ խանութ, տեսնում էք քսան քսան գրվաքաններ զանազան փառած մրցեղէններից, մի քանի գրվաքան թէ՛, փոքր ինչ աւելի կորտած չաքար, երկու-երեք գրվաքան կալքաս, մի քանի հացեր, — դա է այստեղի հայ վաճառականների մեծ մասի բոլոր հարստութիւնը: Հարցնող լինի թէ՛ սիրելի, ուր ես այստեղ եկել, ի՞նչու ես թողել հայրենիքդ. միթէ այնտեղ չը կարողացար այդպիսի չնչին առևտուրը առաջ տանել...

Այս օրերս անցնում եմ Կինէվայի անուանած փողոցով (Կինէվի ամենալաւ փողոցն է), տեսնում եմ պատի մօտ նստած է մի մանրավաճառ: Երեսի գծագրութիւնից իսկոյն իմացայ նրա հայ լինելը և մօտեցայ նրան:

—Բարով, սիրելի, այստեղ ինչ ես շինում, հարցրի ես:

—Աստուծու բարի, աղա, առևտուր եմ անում, պատասխանեց նա ժպտել երեսին:

Մի քանի րօպէից յետոյ իմացայ, որ նա Պարսկաստանից է եկել Կինէվ մանր մօտեր բաներ վաճառելու: Գոնէ նա գալով Պարսկաստանից իր հետ բերել արեւելքի ապրանքը, որ այստեղ կարող էր բաւական ձեռնառու գներով ծախել. ոչ, նա հաւաքել է մի քանի բուրբի, եկել է Կինէվ. մի 15—20 բուրբու մանր մօտեր բաներ է արել և ըսկոսել է իր վաճառականութիւնը: Այն, թշուառ հայեր. ամենքը ասում են, որ դուք խելոք աղջ էք, բայց որ խելոքը այդպէս կը վարվի...

Մի քանի աւելի խոյր վաճառականներ բնակվում են այստեղ իրանց ընտանիքներով: Մէկ օր նստած եմ իմ ծանօթ վաճառականի խանութում և խօսում եմ ծանօթիս հետ: Տուն է մտնում մի տիկին և նրա հետ մի 13-14 տարեկան օրիորդ: Այս տիկինը ինչ որ հարցրեց տաճկերէն իմ ծանօթին և հետեցաւ. Երբ սրանք դուրս գնացին խանութից, իմ ծանօթը դարձաւ դէպի ինձ. «Տե՛ս, ասաց նա, դուք հայեր են. այն տիկինը այստեղի հայ վաճառականի ամուսինն է, իսկ օրիորդը նրա աղջկին է»:

—Բայց ի՞նչու ձեզ հետ տաճկերէն խօսեց, հարցրի ես:

—Դրանք հայերէն չեն իմանում: Մայրը միայն տաճկերէն է խօսում, իսկ աղջկից միայն ռուսերէն:

—Իսկ իրանց հայ են համարում, հարցրի ես հետաքրքրութեամբ:

—Ի հարկէ, պատասխանեց նա զարմանալով, դրանք ամեն տարի գնում են Օղէսոս հաղորդվելու. այնտեղ տարին մի—երկու անգամ լինում է հայոց քահանան:

Եթէ «Մեղու»-ի խմբագիրը լսէր այս խօսքերը, ի հարկէ կը ծափահարէր. նրա կարծիքով դա կը լինէր դարձեալ մի փաստ, որը ցոյց է տալիս ինչպէս հայոց եկեղեցին պահպանում է հայ ութ թիւը և ինչ, Բայց ամեն մի փոքրի շատէ բանիմաց մարդը կարող է միայն տիւրել, տեսնելով ոչ սակաւ այդպիսի երևոյթներ, որոնք շատ պարզ ցոյց են տալիս, թէ ինչպէս կրօնական գաղափարները կուրեն են հայի մէջ ազդեցութեան գաղափարները: Այդ տիկինը կարող է միայն ինքնիրան հայ համարել, կարող է նրան հայ համարել տղէտ ամբողջ, վերջապէս «Մեղու»-ի պ. խմբագիրը, բայց ոչ նա, որ հասկանում է ի՞նչ է հայութիւնը, ի՞նչ է ազգայնութիւնը...

Հայը ծննդեան օրից լսել է, որ նա հայ է, որ ուրիշ հետ և հայոց քահանան է նորան մկրտել, որ ուրիշ հետ և նա հայոց եկեղեցու զաւակն է: Այդ կարծիքը եղել է և է աղէտ մտքով, նոյն կարծիք է հայոց երկրորդ խմբագիրը... Ինչ կայ այսուհետեւ զարմանալու, որ հայը, ազգայնութեան գաղափար ից զուրկ լինելով, անցնելով դէպի միւս եկեղեցին, նա էլ (ըստ մեծի մասին) իրան հայ չէ համարում. նա, ընդունելով կաթօլիկութիւն, իրան փրանգ է անում. անում, ընդունելով ուղղափառութիւնը իրան ուսուցանում: Թիֆլիսում մէկ աւերասանդաւոցի հայ բժշկապետ ինձ պատմել է, որ նա տեսել է մի ամբողջ հայաբնակ գիւղ, որի բնակիչները դարձել են ուղղափառներ և չը նայելով, որ նոքա մաքուր հայերէն են խօսում, ուրիշ լեզու չը գիտեն, իրանց ուսուցանում: Դա շատ բնական է և այդպէս չէր կարող լինել: Այդ բոլորը կարող է կրօնական գաղափարների ազդեցութեան հետեւանքներ համարվել:

Եթէ հային հասկացրել էին, որ նա կորցնելով իր լեզուն, իր ազգայն յատկութիւնները, ամեն տարի լոկ հաղորդվելով, նա հայ չէ կարող հա-

ፆ ሀ ፆ በ ኮ ሊ ኮ ሰ ሀ ሓ ኮ ፆ ጥ በ ኮ ሶ ሀ ሐ ሓ ሀ ኮ ሂ ሶ ሀ ሰ ሀ ሶ ሀ ሀ

«ՄԱՍՆԱԻՈՐ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆԸ»

Օգոստոսի 20-ին կը սկըսուին նորեկները քննութիւնները և ընդունելութիւն, ուսումնարանն ընդունելու է գիշերօթիկ և կիսաթոշակ աշակերտներ:

Այս օգոստոսի 20-ից Օրբելի Օրբելյանցի
և Կարապետ Բէլախեանցի մասնաւոր ու-
սումնարանում կը սկսուեն նորեկ աշակերտ-
ներին ընդունելութիւն: Ուսումնարանը պահ-
պանում է գիրքօթիկ և ընդունում կիսա-
թօշակ աշակերտներ, պատրաստելով նրանց
Տիկխոս. բոլոր միջնակարգ դպրոցների առա-
ջին և երկրորդ դաստանց համար:

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՌԼԱՐԱՐՈՒ Ս. ՄԱՐԻԱՄԵՆՍԻ
օրերորդաց դպրոցի վարչութիւնը պատիւ ունի յայտնել յարգոյ Հասարակութեան, որ աշակերտուհիներին դռն դռնէն սկսելով՝ օգոստոսի 20-ից, շարունակելու է մինչև Սեպտեմբերի 10-ը, որից յետոյ սկսելու է կանօնաւոր ուսումնի: Անցեալ տարի դպրոցը ունէր երկու դասատուն, առաջինիս տարին կունենայ երեք դասատուն:

ՅՈՒԱՋԷԺ ԱՆԷՔԱՆՆԻՐԵԱՆ ՄԵԼԻՔ-ՔԷԳԼԱՆ
ԲԵԱՆՆԻ ՄԱՍՆԱԻՐՐ ԲԵԱՎԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՆ
ՐԱՆԸ (ԹԻՓՆԻՍ, Սաղմոսյա փողոց, տուն
Տուառննովի, № 34) յայտնում է, որ լրա-
ցուցիչ է ընդունողական քննող թիւն
ն երկը սկսվեն օգոստոսի 25-ին, իս-
ռւստումը սեպտեմբերի 2-ին:

Իր յատկութիւններով
մարմնի մասերի մանա-
ւանդ օտքի մատներով
ըրտնքեղ առաջ եկած
փառամեղ ոչնչացնող յայ-
տնի Նիւթը,

ԳԱԼՄԱՆԻՆ

[illegible]

19—25 Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ (1

Ներսիսեան Հայոց Ազգային Հոգևոր դպրոցում՝ Հոգաբարձական խորհրդարանի մէջ՝ Օգոստոս ամսոյ 27-ին, երեկոյեան 7 ժամին կը լինի ածուրդ (առանց կրկնաձուրդի) կապալով տալու նոյն դպրոցի կալուածքը (ընծայած Հանգուցեալ Յարութիւն Օթօյանցից), որ դրանկում է Կուր գետի հեղեղատի (սաղիւն վրա ընդ № 46: Պայմանաթուղթը կարելի է կարդալ Հոգաբարձութեան գիւմնաստան մէջ ամեն օր, բացի կիրակից և տօնօրից առաւօտեան 10-ը. ց12 ժամն:

Գայանեան և Ներսէսեան ղարդոյների ուսուցիչ պ. Վարձկեանը իր գերդաստան մէջ ընդունում է միայն ՁՈՐՍ զիշերթիկ աշակերտուհիներ: Դիմել ու ղղակի «Մշակի» խմբագրութեանը:

ՄԻ ԵՐԻՏՏԱՍԱՐԻ, որ զիտէ հաշուապահ
հոլթիւն, կոմենտուէ տեղ ունենակ, կարող-
է և ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻ կամ ԿԱՆՏՈՐԶԻՒՆ
պաշտոն կատարել. հասցէն թողնել «Մշա-
կի» խմբագրատանը:

Ներկայ տարուայ սեպտեմբերի 15-ին
Թիֆլիսի նահանգական դատարանում (Օկ-
րուժնոյի Սուդուժ, լինելու է սորդ (աճուրդ)
Հանգուցեայ Արկարդեայ Գաժազլիի Հոդերը
Ճախելու Համար, որոնք գտնվում են Բորչա-
լուի Սարաչլու գիւղում, Շուլաէրի մօտ:
Մանրամասնութիւնը կարելի է կարդալ «Рав-
назье» լրագրի № 186 Տէրութեան յայտա-
բարութեան մասնում:

Թիֆլիսից հեռանալու պատճառով ծախ-
վում է 225 բուրլով վաճառող ընդհանուր շի-
նեյուն մի Մեֆենկն: Ծախողը յանձն է առ-
նում նրա գործադրութեան մասին սովորեց-
նեյ առնողին:

Դրմել Յովսէփ ՄԱՍԿԵՐՊԸՅԻՆ, Մուխրան
նսկի փողոց, Սուղաասկի բազարի անկիւն
Գամբարովի տանը, № 8.

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԶՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱ-
ԻՑՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆԶԵԻ 1 ԺԱՄԸ:

Նրկուշաբթի. Գավրօնսկի կանան
խանդ. Գօրալեվիչներին Հ., Ռօտի
եանց կանանց և երկխաների Հ., Գիւշա
եանց խորհրդական և աշերի Հ.
և մարօսկի վկերական և կաշու Հ.
աբայիսկի մղաւե և Հոգեկան Հ.:

Ն ր ք շ ա բ թ ի. Մ ի ն կ ե վ ի չ խ իր ու ռ ւ
ա կ ա ն Հ., Վ զ օ ր օ վ փ ն ի ռ ա կ ա ն և բ ր զ ա
ն Հ., Բ չ լ ա ա ջ ք ի Հ., Բ ա խ ու ա ո ղ
ն ի խ ր ա ր ա ճ ա կ ա ն, կ ա ն ա ն ջ և ե ռ ի խ ա ն ե ռ ի Հ.
Բ ա ս ն օ ղ լ թ ա Գ օ վ ի, Ի ս ի ղ յ ե վ և Վ ե
ի շ շ օ վ ղ ք լ ի ն Հ.:

Զորերը շարժվել են Բուրժուական հեղափոխության հանդեպ, իսկ հեղափոխականները՝ հանդեպ հեղափոխության:

[illegible]

Ուրբաթ. Գալթոնսկի կանանց հինկեզեխերնորգրական հարանոս լուտով մանկաբարձական կանանց եկամուրի հետէլ մորսկի և Աստուծաժառուրով վերնորգրական կաշու հարալի ծրայական ներքին:

Շաբաթ Լիսիցե վ և Վերմիշե վ
երբին հ., Բաբով կուրծքի հ., Եանկո
սկի վեներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վ. ԳՕՐՕՎ բժշկանոցը չէր ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

ԲԺԻՂԿ ԲԱՔԱԵՎ ՀՈՐԵՔՂԱԹԻ ՕՐԵՐԸ ԱՄԱՐՏՈՒՆԱՆ ԾԻԳ ՄԻՆԿԼ 11 ԺԱՄԸ ԸՆԴՈՒՄ Է ԻՐ ՄԱՆԵՐ ԲԺՂԿԱՆՈՂԻ ՀԻՆԱՆՈՆԵՂԻ

Հետաքրքիր է նաև այն հարցը, թե որտեղ են
գտնվում Հայաստանի մշակութային հուշարձանները:
Բնակավայրերի տեսքով դրանք կարող են լինել
միայն առանց վնասների:

Առաջնաբայթ 0 բրեխտ աղքատ Հիւան-
ներին բժշկանոցի տոմսակով ընդունում
մենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առա-
տոհան 9—11 ժամը բժշկանոցում լինում է
անկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու
ամար:

Բժշկանոցի դիրեկտոր Լխսիզեմ:

Մամուլի տակից դուրս եկաւ հրատարակութեամբ (2. ԳՐԻԳՈՐԵԱՆՅԻ) Կովկասեան Գրավաճառանոցի և ծախ-վում է բացառապէս նոյն տեղը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՐԵՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ *ձեռ-*
նարկներ աշխատախոլթեամբ *Ն. ՍԻՄԵՈՆԵԱՆՑԻ:*
Ե. ՏԱՐԻ նախագիտելիք (իբրև հայրենագիտութեան դա-
սերի օրինակ տրուած է թիֆլիզի հայրենագիտութիւնը),
հինգ պատկերներով, գինն է 35 կոպ.
Բ. ՏԱՐԻ մասն ուսումնական և բնական երեսուն և մէկ
պատկերներով, գինն է 60 կոպ.
գումարով առնողներին գիշումն կը լինի: Մամուլի տակ
է **Գ. ՏԱՐԻՆ** մասը քաղաքական:

19—20

Աղէքսանդրապոլս երկսեռ դպրոցաց բարձր դասա-
տանց Համար Հարկատու է եկող ուսումնական տարւոյն
Համար ուսւաց լեզուի մի ուսուցիչ, որ աւարտած լինի
որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով:
Ցանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել
երկսեռ դպրոցների Հոգաբարձութեանց:

Հոգաբարձուք { Սարգիս Միրզայեանց.
Եսատուր Իսահակեանց.

«ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ» պատկերազարդ Հանդիսի ներկայ
ամի երկրորդ տետրը հրատարակուեցաւ և ուղարկուեցաւ պատուելի
բաժանորդաց: Եյս տետրիս մէջ տպագրուեցան տասն ազգային
պատկեր, յորոց ութն՝ նկարուած և փորագրուած են յատուկ մեր
Հանդիսի համար: Ազգային պատկերաց ցուցան այս է. Օրմանեան
փարդապետ, Եյփաղեան արք եպիսկոպոս, Միքայէլ Միսնաարեանց,
Նուբար-Փաշա, Կարին քաղաք, Պետրբուրգայ Հայոց եկեղեցին,
Արձարան Հայոց 'ի Կարին, Սովեալ Հայ բնտանիք 'ի Վան, Վան
քաղաք, Կազմ Հայերէն աւետարանին, Նուիրելոյ Նորին Կայսերա-
կան Ս'եծութեան 'ի Կաթողիկոսէն ամենայն Հայոց:

Ներկայ ամի բաժանորդութիւնն վերջացած լինելով ցանկացողքն
ստանալ կամ գնել «Փարոս Հայաստանի» հանդէսն վճարում են
այսուհետեւ իւրաքանչիւր տետրի համար 1 ռ. 50 Կ.:

Տփրիսում ստանալ կարելի է պ. Օ. Գրիգորեանցի և Կենդ-
րոնական գրափաճառանոցներում:

Հրատարակիչ, Զարմայր Մ. Մսերեանց:

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

ԵՒ

ՏԱՐՐԱԿԱՆ ՌԵՍՈՒՄՆԱՐԱՆ

Օգոստոսի 20-ից կը սկսուի քննու-
թիւնները և նորիկներին ընդունելու-
թիւնը տղայաց և օրրորդաց 4—15
տարեկան հասակը:

ՏԱՐՐԱԿԱՆ ՌԵՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ ԲԱ-
ՑՈՒՆԵԼՈՒ Է ՊԱՆԺՍԵՐ ՈՒՐ ԿԵՆԳՈՒՆՎԵՆ
ԳԻՆԵՐՈՐԹԻԿ ԵՒ ԿԻՍԱԳԻՇԵՐՈՐԹԻԿ ԱՇԱ-
ԿԵՐՏՆԵՐ:

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎԱԿԱՅԱ ՊԵՆԱՐԻՍՈ
ՅԻՆ կից կը բացվեն ՍԵՆԵԱԿՆԵՐ, որա-
կարելի կը լինի ստանալ ԿԱՅԷ, ԵՐԿՈՒԱԿ
ԹԷՅ և պարաստլած հանքային զանանկ
զլոր:

37—40

ԱՆԳՆՆԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԵՋ ՍՏԱՄԳԻԼ Է
 ՄԵՇ ԶԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԹԵՅ ՈՂՂԱԿԻ ԹԵՂԵ-
 ԳՐԾՆԵՐԻՅ, ՆՈՅԱԿԷՆ ՑԻՏՐԱԿԻ ՄԱԿԱՆԶԻԱ
 ՃԱՐԱՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ Է ԿԱՐԲՈՒՆ ՓՈՇԻ Է
 ՀՆՂՈՒԿ ՍԱՐԱԲՈՒՆԻԿ ՀԻԱՆԴՈՒԹՅԱՆԵՐԻ
 ԴԷՄ:

5-10

ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԳԻՄՆԱԶԻԱ ՎԵՐԱՀԱՅՐԱՆՆ
Հայոց ծխական և մասնաւոր ուսումնարանն
բում 8 ՏԱՐԻ դաստիարակութիւն արած մի
ԵՐԻՏԱՍԱՐԴ Ներկայ սեպտեմբերի 1-ից ցան-
կանում է ՈՒՍՈՒՑՈՒ ՊԵՇՏՈՆ ստանալ բա-
ցառապէս ՌՈՒՍԱՅ լեզուից և ԹՈՒԱԲԱՆՈՒ-
ԹԵՆՆԵՅ, ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և զա-
ւառներում: Տեղեկանայ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ կամ
ԷՆԵՐԺԱՆՑԻԱՆՑԻ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՆԵՐՈՒՄ:

16-22